ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան «30» հունիսի 2022թ.

2022 թվականի հունիսի 28-29-ը տեղի ունեցավ ՔՏՀԱ տեսչական մարմնի Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի մարտի 05-ի N 6-Լ հրամանի հավելվածով հաստատված ՔՏՀԱ տեսչական մարմնի աշխատակազմի հաստիքացուցակում փոփոխությունների կատարմանը և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերին.

2. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում նախատեսվող փոփոխություններին.

3. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Փամբուխչյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Գ. Սանոսյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	- Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյան	- ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 8 կողմ, 0 դեմ:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Հովհաննիսյանը Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ ներկայացրել է հատուկ կարծիք-տեղեկանք առ այն, որ ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության 5-րդ և 6-րդ բաժիններում առաջարկված՝ քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչությանը հատկացված հաստիքների քանակի ավելացումն անհրաժեշտ է ապահովել Տեսչական մարմնի համար հաստատված աշխատողների առավելագույն թվաքանակի սահմաններում, մասնավորապես քննարկել առկա թափուր հաստիքների հաշվին հարցը կարգավորելու հնարավորության հարցը (հաշվետվության համաձայն՝ 2022 թվականի ապրիլի 1-ի դրությամբ առկա է 40 թափուր հաստիք):

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի մարտի 05-ի N 6-Լ հրամանի հավելվածով հաստատված ՔՏՀԱ տեսչական մարմնի աշխատակազմի հաստիքացուցակում փոփոխությունների կատարմանը և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերին.

2. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում նախատեսվող փոփոխություններին.

ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունն ընդունվեց ի գիտություն:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Ա. Հայրապետյան**